



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ ԸԻԴ N 0158/02/16թ.  
Նախագահող դատավոր՝ Ն. Գրիգորյան  
Դատավորներ՝                    Հ. Գրիգորյան  
  Կ. Սադյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ N 0158/02/16թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ

29-ին հուլիսի 2016թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր  
դատավորներ՝

Գ.Գրիգորյանի  
Ի.Կարապետյանի  
Գ. Արզումանյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Սուսաննա Ալեքսանդրի Դադասյանի ընդդեմ Կարինե Ռաշիդի Հակոբյանի՝ գումար վերադարձնելուն պարտավորեցնելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի մայիսի 24-ի որոշման դեմ պատասխանող Կ.Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Ռաֆիկ Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

2015 թվականի փետրվարի 5-ին դիմելով դատարան՝ հայցվոր Սուսաննա Ալեքսանդրի Դադասյանը խնդրել է պարտավորեցնել պատասխանող Կարինե Ռաշիդի Հակոբյանին վերադարձնելու անվավեր գործարքով ստացած 720.000 ՀՀ դրամը:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը /այսուհետ՝ Առաջին աստիճանի դատարան/ 2016 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ հայցադիմումն ընդունել է վարույթ, հարուցել քաղաքացիական գործ, իսկ նույն օրը կայացրած մեկ այլ որոշմամբ կիրառել է հայցի ապահովման միջոց՝ հայցագնի

չափով արգելանք դնելով պատասխանողին սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա:

Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի մարտի 31-ի վճռով հայցը բավարարվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/, պատասխանող Կ.Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Ռ.Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով վճիռը, իր 2016 թվականի մայիսի 24-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի մարտի 31-ի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել պատասխանող Կ.Հակոբյանը և նրա ներկայացուցիչ Ռ.Մարտիրոսյանը:

ԼՂՀ Գերագույն դատարանի 2016 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 23-րդ, 43-րդ, 44-րդ, 47-50-րդ հոդվածների, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 876-րդ, 877-րդ, 878-րդ, 881-րդ, 882-րդ հոդվածների, ԼՂՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, սխալ է մեկնաբանել ՇԻԴ N 0481/02/13 քաղաքացիական գործով ԼՂՀ Գերագույն դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումը: Դատարանը պետք է կիրառեր ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածի 3-րդ մասը:

Նշված պնդումները բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ, 882-րդ հոդվածների բովանդակությունը, բողոքաբերը նշել է, որ պատասխանողը վիճարկել է փոխառության պայմանագիրը՝ իրականում հայցվորից դրամ չստանալու հիմքերով: Հետևապես, ինչպես առաջին ատյանի դատարանը, այնպես էլ վերաքննիչ դատարանը պարտավոր էին հաստատված համարել, որ փոխառության պայմանագիր չի կնքվել: Ստորադաս դատարանները ապացույցները ոչ ճիշտ գնահատելու պատճառով, խախտելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ և 878-րդ հոդվածների պահանջները, չեն կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածի 3-րդ մասը, որը պետք է կիրառեին: Վերաքննիչ դատարանում պատասխանող կողմն արտահայտել է այն դիրքորոշումը, որ քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից կայացված որոշման նկարագրական մասում բերված ապացույցները մեկը մյուսի հետ գտնվում են հակասությունների մեջ, և նման հակասությունները վկայում են քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից գործով ոչ օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննություն իրականացնելու մասին:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 47-50-րդ հոդվածների պահանջների խախտման մասին իր փաստարկը բողոքաբերը, շարադրելով նշված հոդվածների բովանդակությունը, հիմնավորել է նրանով, որ գործի փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ ստորադաս դատարանները իրենց դատական ակտերի հիմքում դրել են բացառապես քրեական

գործի նյութերը: Մակայն քրեական գործի նյութերը կարող են ապացույց հանդիսանալ միայն դատական քննության ընթացքում հետազոտված այլ ապացույցների հետ համադրման և օբյեկտիվ գնահատման արդյունքում: Մինչդեռ հայցվորը բացի քրեական գործի վարույթի կարճման մասին որոշումից, այլ ապացույց չի ներկայացրել և դատական նիստում ոչ թե ցուցմունք է տվել, այլ բացատրություն /որն ապացույցի ուժ չունի/: Այսինքն՝ հայցվորը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի ուժով կրելով ապացուցման առարկայի ապացուցման պարտականությունը, գործի օբյեկտիվ լուծման համար պարտավոր էր բերել այլ ապացույցներ, որոնք քրեական գործի նյութերի հետ միասին կարող են օբյեկտիվ պատկերացում տալ գործի հանգամանքների մասին:

Վերաքննիչ դատարանն անհիմն է մերժել պատասխանող կողմի միջնորդությունը՝ պատասխանողի բողոքի հիման վրա քրեական գործի վարույթը կարճելու հիմնավորվածությունը ստուգելու արդյունքով ԼՂՀ գլխավոր դատախազության կողմից ընդունված եզրակացությունը պահանջելու մասին:

Ըստ բողոքի՝ Վերաքննիչ դատարանը, հղում կատարելով ԼՂՀ Գերագույն դատարանի ԸԻԴ N 0481/02/13 քաղաքացիական գործով արտահայտված իրավական դիրքորոշմանը, այն սխալ է ընկալել: Նշված քաղաքացիական գործի փաստական հանգամանքները համադրելով սույն գործի փաստական հանգամանքների հետ, ակնհայտ է, որ դրանք տարբեր են:

Այսպես՝ ԸԻԴ N 0481/02/13 քաղաքացիական գործի քննության ընթացքում հետազոտվել են քրեական գործում առկա հետևյալ փաստաթղթերը՝ քրեական գործով վկաների, պատասխանողի՝ որպես վկա, ապա՝ որպես մեղադրյալ հարցաքննության արձանագրությունները, ինչպես նաև հիմք են ընդունվել պատասխանող Վ.Գրիգորյանի կողմից պարտքի առկայությունը չժխտելու մասին վկայող փաստերը: Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով դատարանը ուսումնասիրել է բացառապես քննիչի որոշման նկարագրական մասում արտացոլված հանգամանքները:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ սույն գործով Գերագույն դատարանի կողմից կայացվելիք որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, և որ առկա է դատական սխալ:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը խնդրել է բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի մայիսի 24-ի որոշումը, կայացնել ըստ էության դատական ակտ հայցը մերժելու մասին կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1/ Կողմերի միջև փոխառության պայմանագիր չի կնքվել, և գրավոր այլ փաստաթուղթ, այդ թվում՝ ստացական, չի կազմվել:

2/ ԼՂՀ ոստիկանության քննչական վարչության Ստեփանակերտի քննչական բաժնի քննիչ Գ.Ղարիբյանի կողմից 26.01.2016թ. ընդունված՝ քրեական գործով

վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ /այսուհետ՝ նաև քրեական հետապնդման մարմնի որոշում/ արձանագրվել է. <<Թեկուզ քրեական գործի նյութերով հաստատվել է այն հանգամանքը, որ Կ.Հակոբյանը 2014թ. դեկտեմբերի 25-ին՝ կեսօրին, 1.000.000 ՀՀ դրամ գումար է պարտքով վերցրել Ս.Դադասյանից և գնացել քաղաք Երևան գնումների համար, որը հաստատվում է ակնատես վկաների ցուցմունքներով, հեռախոսագանգերի վերծանումներով, ըստ որի՝ բազմաթիվ անգամ Ս.Դադասյանը զանգահարել է Կ.Հակոբյանին, սակայն վերջինս չի պատասխանել, բայց քրեական գործի նյութերում չկա որևէ փաստական տվյալ այն մասին, թե ինչ հանցավոր վարքագիծ է դրսևորել Կ.Հակոբյանը... ուստի անհրաժեշտ է Կ.Հակոբյանի նկատմամբ ԼՂՀ քր. օր-ի 184-րդ հոդվածով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով, նախատեսված ԼՂՀ քր.դատ.օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով>>:

Նշված որոշումը վերադասության կամ դատական կարգով բեկանված չէ:

3/ Հայցվոր Ս.Դադասյանը հայցը ներկայացրել է անվավեր գործարքով ստացածը վերադարձնելու հիմքով:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է բողոքում բարձրացված հարցի՝ այն է՝ քրեական գործով ձեռք բերված ապացույցները՝ քաղաքացիական դատավարության ընթացքում օգտագործելու թույլատրելիության և գնահատման, վերաբերյալ Գերագույն դատարանի որոշման՝ օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու հանգամանքով:

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել, Վերաքննիչ դատարանի որոշումը՝ բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ <<Դատարան դիմելու իրավունքը>> վերտառությամբ 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար...:

Պաշտպանության համար դատարան դիմելու հնարավորությունը, սակայն, ամենևին չի նշանակում, որ ցանկացած անձ, ցանկացած պահանջով, ցանկացած ձևով կարող է դիմել դատարան: Ակնհայտ է, որ ոչ մի իրավունք չի կարող բացարձակ լինել և օգտագործվել իր նշանակությանը հակառակ: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ դատական պաշտպանության իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարանը հայց /դիմում/ ներկայացրած անձի պահանջը քննում է իր իրավասությունների սահմաններում՝ օրենքի հիման վրա, պահպանելով քաղաքացիական դատավարության սկզբունքները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Հավասարությունն օրենքի և դատարանի առջև» վերտառությամբ 5-րդ և «Կողմերի մրցակցությունը և իրավահավասարությունը» վերտառությամբ 6-րդ հոդվածների համաձայն՝ քաղաքացիական գործերով արդարադատությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև՝ քաղաքացիների ...հավասարության սկզբունքների հիման վրա, քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանի առջև բարձրացված է միայն հետևյալ իրավական հարցը. արդյո՞ք քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը թույլատրելի ապացույց է և բավարար է պատասխանող Կ.Հակոբյանի կողմից հայցվոր Ս.Դադասյանից 1.000.000 ՀՀ դրամ ստանալու փաստը հաստատված համարելու համար:

Այսպիսով առաջ է քաշվում քրեական գործով ձեռք բերված ապացույցների՝ քաղաքացիական դատավարության ընթացքում օգտագործման թույլատրելիության հարցը: Այդ կապակցությամբ Գերագույն դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե արդյո՞ք սույն գործով Առաջին և Վերաքննիչ դատարանները պահպանել են տվյալ ապացույցն օգտագործելու կանոնները և պատշաճ գնահատական են տվել այդ ապացույցին:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին աստիճանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի նույն օրենսգրքի 121.1-ին հոդվածով սահմանված պահանջները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի վճիռը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121.1-րդ հոդվածի համաձայն՝ «1. Առաջին աստիճանի դատարանի վճիռն օրինական է, եթե այն կայացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի, այլ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս:

2. Առաջին աստիճանի դատարանի վճիռը հիմնավորված է, եթե վճռում շարադրված եզրահանգումները և հաստատված փաստերը համապատասխանում են առաջին աստիճանի դատարանում հետազոտված ապացույցներին:

3. Առաջին աստիճանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները»:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Առաջին աստիճանի դատարանը վճիռ կայացնելիս՝ 1/ գնահատում է ապացույցները, 2/ որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ փաստերն են ապացուցվել և որոնք չեն ապացուցվել,....:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: 2. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:... 6. Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:...»:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք: 2. Գործին մասնակցող անձը, որը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն գտնվում է, իրավունք ունի տվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմել դատարան»:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, և դատարանը հանում է ապացույցների կազմից:

Նշված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ գործով ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք, որ եթե գործին մասնակցող անձը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել, նա իրավունք ունի այդ ապացույցը ձեռք բերելու համար դիմել դատարան, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն է, մեկ ապացույցը մյուս ապացույցների միջոցով ստուգելը, ներկայացված ապացույցների միջև եղած հակասությունները վեր հանելը և վերացնելը, որի արդյունքում դատարանը պետք է գնահատի յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը և գնահատի ապացույցները՝ արժանահավատության և բավարարության տեսակետից: Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատական ապացուցման նպատակը գործի իրական հանգամանքների, գործի լուծման համար էական

նշանակություն ունեցող իրավաբանական փաստերի առկայության կամ բացակայության հաստատումն է:

Անդրադառնալով ապացույցների վերաբերելիության հարցին, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դատարանն ապացույցների վերաբերելիության կանոնները կիրառելիս պետք է հաշվի առնի, որ վերաբերելի են այն ապացույցները, որոնք անհրաժեշտ են քննվող գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ապացույցների ուժը քանակի մեջ չէ, այլ՝ որակի: Ուղղակի ապացույցն ավելի նախընտրելի է, քան անուղղակին:

Ապացույցները բավարար են համարվում, եթե դրանց հիման վրա դատարանը կարող է լուծել վեճը: Ապացույցների բավարարությունը գնահատողական կատեգորիա է, որի գնահատումը դասվում է դատարանի հայեցողական լիազորությունների շարքին: Եվ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատարանի խնդիրն է յուրաքանչյուր կոնկրետ իրավական խնդրի նկատմամբ կիրառել դրա առանձնահատկություններին համարժեք իրավական պահանջները:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ /ներկայումս գործող քաղաքացիական օրենսգրքի 877-րդ/ հոդվածի 1-ին և 3-ր մասերի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առոչինչ է:

Սակայն նույն հոդվածի 2-րդ մասը թույլատրում է ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ ներկայացնել փոխառուի տված ստացականը կամ փոխառուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ: Օրենսդիրը որևէ այլ պահանջ չի ներկայացնում նշված փաստաթղթի ձևին և բովանդակությանը, հետևաբար դրա վերաբերյալ գործում են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածով սահմանված գրավոր ապացույցներին ներկայացվող պահանջները, իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանելով գրավոր ապացույցների հասկացությունը, ամրագրում է, որ գրավոր ապացույցներ են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, ...այլ փաստաթղթերը և նյութերը...:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը...:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված է դատարանի համար քրեական գործերով օրինական ուժի մեջ մտած դատավճիռների պարտադիրություն միայն այն փաստերով, որոնցով հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թեև քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով հաստատված հանգամանքները ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իմաստով չունեն նախապես հաստատված ապացույցի ուժ, այդուհանդերձ դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տան դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, հետևաբար դատարանը պարտավոր է տվյալ գործի շրջանակներում տալ նաև այդ ապացույցների իրավական գնահատականը:

Գործի փաստերի համաձայն՝ հայցվոր Ս.Դադասյանը, դիմելով դատարան, խնդրել է պատասխանող Կ.Հակոբյանից բռնագանձել 720.000 ՀՀ դրամ՝ իբր 2014 թվականի դեկտեմբեր ամսին 1.000.000 ՀՀ դրամ պարտք վերցրած գումարի մնացորդ: Քանի որ կողմերի միջև գրավոր փաստաթուղթ չի կազմվել, խնդրել է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին մասի, 878-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի, 304-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները և հիմք ընդունել ԼՂՀ ոստիկանության քննչական վարչության Ստեփանակերտի քննչական բաժնի ավագ քննիչի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 26.01.2016թ. որոշումը:

Առաջնորդվելով հայցվորի կողմից կանխորոշված հայցի առարկայի և հիմքի սահմաններով, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ սույն գործով ապացուցման առարկան է կազմել պատասխանող Կ.Հակոբյանի կողմից հայցվոր Ս.Դադասյանից 1.000.000 ՀՀ դրամ վերցնելու փաստը:

Ինչպես հետևում է գործի նյութերից՝ Առաջին ատյանի դատարանը հայցը բավարարել է հետևյալ պատճառաբանությամբ. <<հաշվի առնելով, որ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ վկաների, որի թվում են նաև պատասխանողն ու նրա հարազատները, տված ցուցմունքների, այլ գրավոր ապացույցների գնահատման արդյունքում նախաքննությունն իրականացրած պաշտոնատար անձն արձանագրել է հայցվորի կողմից պատասխանողին 1.000.000 դրամ գումար փոխանցելու, դրանից 280.000 դրամը վերադարձնելու փաստը, նշված որոշումն ո՛չ հայցվորի, ո՛չ էլ պատասխանողի կողմից ստանալուց հետո վերադասության կարգով չի բողոքարկվել, ուստի դրանք բավարար հիմք են դրանում առկա տեղեկությունների արժանահավատությունն արձանագրելու, և պատասխանողի տված ցուցմունքն անարժանահավատ գնահատելու համար>>: Մինչդեռ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի որոշումը, որպես գրավոր ապացույց, դատարանների կողմից բազմակողմանի չի հետազոտվել, դրա արդյունքում դատարանը որևէ գնահատական չի տվել որոշման մեջ արտացոլված վկաների ցուցմունքների հակասություններին, որոնցից հետևում է, որ որևէ վկա ներկա չի եղել հայցադիմումում նշված չափով գումար փոխանցելուն, իսկ գումարի չափի մասին վկաները ցուցմունքներ են տվել Ս.Դադասյանի խոսքերից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերի համադրմամբ Գերագույն դատարանը գտնում է, որ թեև վերը նշված փաստի հաստատումը մտնում էր



քրեական գործով ապացուցման առարկայի մեջ, իսկ նախաքննության մարմնի բուն եզրահանգումն այդ փաստի առկայության վերաբերյալ հաստատված չէ ապացուցման ֆորմալ պահանջների պահպանմամբ՝ դատարանները դա հաստատված են համարել առանց անմիջականորեն հետազոտելու քրեական գործի նյութերը և ստուգելու պատասխանողի փաստարկները, ինչը հակասում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, համաձայն որոնց՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Այսինքն՝ քննիչի որոշումը տվյալ դեպքում չունի նախապես հաստատված ապացույցի ուժ և պետք է քննության և գնահատման առարկա դարձվի քաղաքացիական դատավարության ընթացքում:

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, նաև վկայակոչել է ԼՂՀ Գերագույն դատարանի թիվ ԸԻԴ 0481/02/13 քաղաքացիական գործով 2014թ. հունվարի 29-ի որոշումը, մինչդեռ նշված գործի փաստական հանգամանքները տարբերվում են սույն գործի հանգամանքներից, իսկ ԼՂՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Գերագույն դատարանի դատական ակտի հիմնավորումները /այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները/ պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Այսպես՝ թիվ ԸԻԴ 0481/02/13 քաղաքացիական գործով պարզվել է, որ քրեական գործով՝ նախաքննության ընթացքում պատասխանողը հաստատել է հայցվորից 11 միլիոն ՀՀ դրամ վերցնելու փաստը, սակայն սույն գործով պատասխանողը կտրականապես ժխտել է հայցվոր Ս.Դադայանից գումար ստանալու փաստը, և գործում որևէ ուղղակի ապացույց դրա վերաբերյալ բացակայում է:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում բարձրացված նոր ապացույցներ ներկայացնելու հարցին, ապա Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Նշված իրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է վերաքննիչ դատարանի՝ նոր ապացույց ընդունելու լիազորությունը, սակայն այն սահմանափակել է պայմանով, որ տվյալ ապացույցը չի ներկայացվել առաջին ատյանի դատարանում կողմերի կամքից անկախ հանգամանքներով և ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար: Հետևաբար, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության նպատակով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը պետք է մանրակրկիտ ուսումնասիրի առաջին ատյանի դատարան նշված ապացույցը ժամանակին չներկայացնելու պատճառները:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքում բարձրացված դատաքննության ընթացքում հայցվոր Ս.Դադայանի կողմից բացատրություն /որն ապացույց չի հանդիսանում/, այլ ոչ թե ցուցմունք տալու հարցին, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասը, ի թիվս այլ ապացույցների, ապացույցների թվին է դասում գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Նշված ապացույցի կարգավորումն իր տեղն է գտել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործին մասնակցող անձն իրավունք ունի ցուցմունքներ տալու գործով ապացուցման ենթակա փաստերի մասին:

Գործին մասնակցող անձն իրավունք ունի միջնորդելու, որ գործին մասնակցող մյուս անձը ցուցմունք տա գործով ապացուցման ենթակա փաստերի մասին:

Դատարանը, բավարարելով միջնորդությունը, կարող է հանձնարարել գործին մասնակցող համապատասխան անձին տալ ցուցմունքներ գործով ապացուցման ենթակա փաստերի մասին:

Գործին մասնակցող անձը պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ>>:

Նշված իրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործով ցուցմունք կամ բացատրություն տալը կողմի իրավունքն է, որն ամրագրված է նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Գործին մասնակցող անձանց իրավունքները և պարտականությունները» վերտառությամբ 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում: Մակայն դատարանը, գործին մասնակցող մյուս անձի միջնորդության հիման վրա կարող է հանձնարարել գործին մասնակցող համապատասխան անձին տալ ցուցմունքներ, և տվյալ դեպքում գործում է սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացման ինստիտուտը, ինչը բխում է նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ գործին մասնակցող անձինք սուտ ցուցմունք տալու համար ենթակա են պատասխանատվության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով, հիմնավոր են վճռաբեկ բողոքի փաստարկները՝ ստորադաս դատարանների կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 23-րդ, 43-րդ, 44-րդ, 47-50-րդ հոդվածների պահանջների խախտման մասին:

Ինչ վերաբերում է նյութական նորմերի խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստարկներին, ապա Գերագույն դատարանն անհրաժեշտ չի համարում այդ հարցին անդրադառնալ, դրան հնարավոր կլինի անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական իրավունքի նորմերի խախտումը վերացնելուց հետո:

Ամփոփելով վերոգրյալը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չեն կատարել, հետևաբար պետք է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված լիազորությունը, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն

բավարարում է վճարել բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, Գերագույն դատարանը փաստում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, վերաքննիչ կամ վճարել բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններով: Քանի որ սույն գործով վեճը վերջնական լուծում չի ստացել և գործն ուղարկվում է նոր քննության, ապա դատական ծախսերի /դրանք բաղկացած են պետական տուրքից/ բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Պատասխանող Կ.Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Ռ.Մարտիրոսյանի վճարել բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի մայիսի 24-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ<sup>ա</sup>  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ<sup>ա</sup>

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Գ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ